



ՄՊՀՀ մամլո հաղորդագրություն #12

Երևան, Հայաստան – ապրիլի 14, 2008թ.

Աշխատանքային օրենսդրության և ոլորտի ինստիտուցիոնալ կառույցների վերաբերյալ հարցունը հանգեցնում է քաղաքականության զարգացման առաջարկների:

14/04/08, 10:00 - Այսօր «ԱՄՆ ՄԶԳ Հայաստան, Սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման» ծրագիրը ներկայացրեց Հայաստանի աշխատանքային օրենսդրության և ինստիտուցիոնալ մարմինների վերաբերյալ հանրային կարծիքի հարցման արդյունքները:

ՄՊՀՀ ծրագրի ենթակապալառու՝ Վի Ջի Էմ Փարթնրզ ընկերության կողմից իրականացված հետազոտության շրջանակներում 2007թ. հուլիսից հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում հարցմանը մասնակցեցին 23 փորձագետներ և 200 մասնավոր ընկերություններ (150-ը՝ Երևանից, 50-ը՝ Հայաստանի մարզերից): Նպատակն էր գնահատել նրանց վերաբերմունքը ՀՀ աշխատանքային օրենսդրության, այդ թվում աշխատանքային օրենսգրքի և աշխատանքի անվտանգության նորմեր պարունակող այլ իրավական ակտերի նկատմամբ, ինչպես նաև հավաքագրել աշխատանքային օրենսգիրքը բարեփոխելու և հանրային-մասնավոր հատված համագործակցությունը բարելավելու վերաբերյալ առաջարկություններ:

Հետազոտության զեկույցն ընդգրկում կերպով ներկայացնում է ՀՀ-ում աշխատանքային օրենսդրության ներկա իրավիճակը և մատնացույց է անում բնագավառի հետագա զարգացման հնարավորությունները, այդ թվում՝ հանրային քաղաքականության ուղղությունները:

Ըստ հարցման արդյունքների՝

- Հարցվողների 53%-ը գնահատում է ՀՀ աշխատանքային օրենսգիրքը «բավարար», սակայն տեսնում է բավականին թերություններ:
- Աշխատանքից ազատվածների մեծամասնությունը (42.5%) հեռացել են սեփական նախաձեռնությամբ, մինչդեռ միայն 12%-ն է ազատվել աշխատանքային պարտականությունների թերի կատարման պատճառով:
- Ընկերությունների 43%-ը նշել է, որ լիովին համաձայն է Աշխատանքի պետական տեսչության աշխատակիցների կողմից ձեռնարկված գործողությունների հետ՝ կապված օրենսդրության բացահայտված խախտումների հետ:
- Ըստ փորձագետների մեծամասնության՝ ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը երիտասարդ սակայն կայացած պետական կառույց է:
- Փորձագետների կարծիքով (30%) Հայաստանում գործադուլների բացակայությունը առաջին հերթին պայմանավորված է «աշխատողների կողմից իրենց իրավունքների ցածր գիտակցմամբ»:
- Ընկերությունների 52%-ը չի մասնակցել տեսչության կողմից կազմակերպված դասընթացներին, իսկ մասնակցած կազմակերպությունների 89%-ը դասընթացները գնահատել է «բավարար»:

Շնորհանդեսին մասնակից փորձագետները, պետական և մասնավոր հատվածի ներկայացուցիչները քննարկեցին հետազոտության արդյունքներից բխող քաղաքականության հնարավոր միտումները, այդ թվում՝ աշխատանքային օրենսդրության բարելավման առաջարկությունները, ոլորտի պետական մարմինների գործառնությունների հստակեցման կարիքը, և ամենակարևորը՝ ոլորտի ինստիտուտների հետ հանրության շփման պատշաճ մեխանիզմների մշակման անհրաժեշտությունը: Քննարկման արդյունքում առաջարկվեց աշխատողների և գործատուների համար հատուկ տեղեկատվական համակարգի ստեղծում (թեժ գիծ), ինչպես նաև օրենսդրության փոփոխությունների և նորությունների վերաբերյալ գործատուներին տեղեկատվության անհապաղ տրամադրման մեթոդների ձևակերպում և ոլորտի թափանցիկության ու հրապարակայնության ավելացում: Ըստ ԱՄՆ ՄԶԳ ՄՊՀՀ ծրագրի տնօրեն դոկտոր Ռեմմի՝ «ՄՊՀՀ-ն համագործակցելու է ՀՀ Աշխատանքի պետական տեսչության հետ՝ մոտ ապագայում աշխատողների և գործատուների համար թեժ գիծ ստեղծելու հարցով»:

Շնորհանդեսը նպաստեց հարցման արդյունքների մատչելիությանը, որն իր հերթին կնպաստի հանրության կարիքներից բխող վերջնական զեկույցի պատրաստմանը: Այն նաև ծառայեց որպես համընդհանուր իրազեկման միջոց՝ ոլորտի և դրա քաղաքականության բարելավման շուրջ երկխոսություն ծավալելով պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների և մասնավոր հատվածի ներկայացուցիչների միջև: